

Համահայկական հայագիտական 8-րդ օլիմպիադայի

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԻ

(գրավոր և բանավոր փուլերի համար)

1. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի բարձրագույն լեռնագագաթը:
2. Ո՞րն է Հայաստանի Հանրապետության բարձրագույն լեռնագագաթը:
3. Ըստ Մովսես Խորենացու կողմից գրի առնված հայերի ծագման մասին ավանդագրույցի՝ ո՞վ է հայ ժողովրդի նախնին:
4. Ո՞րն է առաջին պետական կազմավորումը Հայաստանում:
5. Ո՞ր դարերում է հիշատակվում Արմանի թագավորությունը:
6. Ո՞ր երկրի արձանագրություններում է հիշատակվում Հայասա թագավորությունը:
7. Ո՞վ է Ուրարտուի առաջին հիշատակված արքան:
8. Ո՞վ է հիմնել Տուշպա մայրաքաղաքը:
9. Ո՞վ և ե՞րբ է հիմնել Էրեբունի քաղաքը:
10. Ի՞նչ քաղաք է հիմնել Ռուսա 2-րդն Արարատյան դաշտում:
11. Ո՞վ էր Երվանդ Սակավակյացի որդին, որ դարձավ Հին Հայաստանի ամենանշանավոր արքաներից մեկը:
12. Ո՞ւմ գլխավորությամբ Մեծ Հայքը վերականգնեց անկախությունը Գավգամելայի ճակատամարտից (Ք.ա 331 թ.) հետո:
13. Ովքե՞ր են հանդիսանում Երվանդունիների արքայատոհմի ներկայացուցիչներ: Ո՞ր ժամանակաշրջանում է իշխել Երվանդունիների արքայատոհմը::
14. Հայաստանի ո՞ր մայրաքաղաքի տեղի ընտրությունը և հատակագծի կազմությունն է կատարել Հին աշխարհի նշանավոր գորավար Հաննիբալը:
15. Ե՞րբ է գահակալել Տիգրան II Մեծը:
16. Ո՞ր տարածքներն են ընդգրկված եղել Տիգրան Մեծի տերության մեջ:
17. Ո՞ր հռոմեական գորավարներն են ներխուժեց Հայաստան:
18. Ե՞րբ է տեղի ունեցել Արածանիի ճակատամարտը:
19. Ո՞րն է Տիգրան Մեծի և Պոմպեոսի միջև ստորագրած Արտաշատի պայմանագրի բովանդակությունը:
20. Ովքե՞ր են հանդիսանում Արտաշեսյան արքայատոհմի ներկայացուցիչներ: Ո՞ր ժամանակաշրջանում է իշխել Արտաշեսյան արքայատոհմը:
21. Ո՞ւմ հետ է գահակից եղել Տիգրան IV արքան:
22. Որտե՞ղ տեղի ունեցավ Տրդատ I-ի թագադրությունը:
23. Ո՞վ է հիմնել Վաղարշապատ մայրաքաղաքը:
24. Հին Հայաստանում ո՞ւմ էր պատկանում երկրի գերագույն իշխանությունը:
25. Ո՞վ էր Հին Հայաստանում երկրի հոգևոր առաջնորդը:

26. Ո՞րն էր երկրի ռազմական գործակալությունը:
27. Ինչպե՞ս էր կոչվում արքունի թիկնապահության գործակալությունը:
28. Ո՞վ է գրել Տիգրան Մեծի պատմությանը նվիրված ամբողջական գիրք:
29. Ըստ Ղևոնդ Ալիշանի հաշվարկի՝ ե՞րբ է սկզբնավորվել Հայոց Բուն տոմարը:
30. Ո՞վ էր հայոց վերջին քրմապետը:
31. Ո՞ր քաղաքն է հիմնադրել Խոսրով Կոտակը:
32. Ովքե՞ր են հանդիսանում Արշակունյաց արքայատոհմի առավել հայտնի ներկայացուցիչներ: Ե՞րբ անկում ապրեց Արշակունյաց թագավորությունը Հայաստանում
33. Ի՞նչ քաղաքն է հիմնադրել Արշակ 2-րդը:
34. Ո՞ր ճակատամարտից հետո է Պապ թագավորը վերջնականապես հաստատվել Հայաստանի գահին:
35. Ո՞ր ժամանակաշրջանի դեպքերն է նկարագրում Փավստոս Բուզանդը:
36. Ո՞ր թվականին է Հայաստանն առաջին անգամ բաժանվել Հռոմի և Պարսկաստանի միջև:
37. Ո՞վ էր Մեսրոպ Մաշտոցին աջակցող հայոց արքան և կաթողիկոսը:
38. Ե՞րբ տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտը:
39. Ո՞վ էր հայոց մարգապանը 481-484 թթ. ապստամբության սկզբում:
40. Ե՞րբ է կնքվել Նվարսակի հաշտության պայմանագիրը:
41. Ո՞ր թվականին է Հայաստանը երկրորդ անգամ բաժանվել Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:
42. Որտե՞ղ է կնքվել 652 թ. հայ-արաբական պայմանագիրը:
43. Ե՞րբ սկիզբ առավ Բագրատունիների արքահատոհմը: Ո՞վքեր են այս տոհմի ներկայացուցիչներ:
44. Ո՞ւմ օրոք է Կարսը հռչակվել Բագրատունյաց կենտրոնական թագավորության մայրաքաղաք:
45. Ո՞ր էր գրադեցնում երկրի Մեծ դատավորի պաշտոնը:
46. Ու՞մ տիրապետությունից են Չաքարյաններն ազատագրել Անի քաղաքը:
47. Ո՞ր թվականին է հիմնադրվել Ռուբինյան իշխանությունը Կիլիկիայում և ե՞րբ է տեղի ունեցել Կիլիկիայի հայոց թագավորության հռչակումն ու անկումը:
48. Ո՞ւմ օրոք է Միսր դարձել Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք:
49. Ինչո՞վ է հայտնի Կիլիկիայի թագավոր Լևոն II-ը:
50. Ո՞ր թվականին Հերուսյանները հաստատվեցին Կիլիկյան Հայաստանի գահին:
51. Ի՞նչ նշանավոր դաշնագիր է կնքվել Հերուսյան թագավորի օրոք:
52. 1701 թ. Հայաստանի ազատագրության նպատակով ո՞ւմ հետ հանդիպեց Իսրայել Օրին:
53. Ո՞վ էր ղեկավարում Սյունիքի ազատագրական պայքարը 1722-1728 թթ.:
54. Ո՞վ էր ղեկավարում Սյունիքի ազատագրական պայքարը Դավիթ Բեկի մահվանից հետո:

55. Ու՞մ հետ էր համագործակցում Հովսեփի Էմինը:
56. Ո՞ր թվականին են Արևելյան Վրաստանի կազմում Ռուսաստանին միացել Լոռի-Փամբակը, Ղազախն ու Շամշադինը:
57. Ո՞ր պատերազմի արդյունքում և ո՞ր պայմանագրով Լոռու, Ղազախի, Շամշադինի, Իջևանի, Շիրակի և Չանգեզուրի շրջանները անցան Ռուսաստանին:
58. Ո՞ր պայմանագրով ավարտվեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:
59. Ո՞վ էր գլխավորում Բեռլին ուղարկված արևմտահայերի պատվիրակությունը 1878 թվականին:
60. Ի՞նչ հրապարակախոսական աշխատանք գրեց Բեռլինի կոնգրեսից հուսախաբված Խրիմյան Հայրիկը:
61. Ե՞րբ է ստեղծվել մեզ հայտնի առաջին ազատագրական խմբակը՝ «Բարենպաստակ ընկերությունը»:
62. Որտե՞ղ ստեղծվել «Հայրենիքի սիրո գրասենյակ» ազատագրական խմբակը:
63. Որտե՞ղ ստեղծվել «Պաշտպան հայրենյաց» ազատագրական խմբակը:
64. Ե՞րբ է ստեղծվել «Հայրենասերների միություն» ազատագրական խմբակը:
65. Որտե՞ղ են գործել «Միություն ի փրկություն» և «Սև խաչ» ազատագրական խմբակները:
66. Ե՞րբ և որտե՞ղ է ստեղծվել Արմենական կուսակցությունը:
67. Որտե՞ղ էր Ս. Փորթուգայանը հրատարակում «Արմենիա» թերթը:
68. Ե՞րբ և որտե՞ղ է ստեղծվել Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը:
69. Որտե՞ղ է ստեղծվել Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը:
70. Ե՞րբ և որտե՞ղ է ստեղծվել Հայ հեղափոխական դաշնակցությունը կուսակցությունը:
71. Ե՞րբ է ծավալվել հայ ֆիդայական (հայդուկային) շարժումը:
72. Ո՞վ էր առաջին հայտնի ֆիդայապետը:
73. Ո՞ր կուսակցության ձեռնարկներից էին 1890 և 1895 թթ. խաղաղ ցույցերը Կոստանդնուպոլսում:
74. Ո՞ր կուսակցության նախաձեռնությամբ տեղի ունեցան Սասունի 1894 թ. և Չեյթունի 1895-1896 թթ. ապստամբությունները:
75. Ո՞ր կուսակցությունն իրականացրեց Ս. Կուկունյանի խմբի արշավանքը դեպի Արևմտյան Հայաստան և Օսմանյան բանկի գրավումը:
76. Ո՞ր հայդուկն է մասնակցել Առաքելոց վանքի կռվին:
77. Ո՞վ էր 1904 թ. Սասունի ինքնապաշտպանության Չինվորական մարմնի ղեկավարը:
78. Ռուսաստանի ո՞ր ցարն է հրամանագիր ստորագրեց Հայոց եկեղեցու կալվածքներն ու գույքը բռնագրավելու մասին: Ինչպիսի՞ն էղավ այս հրամանագրի ճակատագիրը:

79. Ե՞րբ Արևմտյան Հայաստանի գեներալ-նահանգապետներ նշանակվեցին հովանդացի Լ. Վեստենենկը (նստավայրը՝ Էրզրում) և նորվեգացի Ն. Հոֆը (նստավայրը՝ Վան):
80. Ո՞րքան հայեր զոհ գնացին Հայոց Մեծ Եղեռնի ժամանակ:
81. Ե՞րբ է ՄԱԿ-ն ընդունել ցեղասպանության մասին կոնվենցիան, որում ցեղասպանությունը հայտարարվում էր հանցագործություն մարդկության դեմ, որը վաղեմության ժամկետ չի ճանաչում:
82. Ե՞րբ է սկսվել Կոստանդնուպոլսի հայ մտավորականների ձերբակալությունը, ապա արսորն ու ոչնչացումը:
83. Ինչո՞վ է նշանավոր 1919 թ. Փարիզի:
84. 1917 թ. դեկտեմբերի 5-ին որտե՞ղ ստորագրվեց Կովկասյան ճակատի զինադադարը ռուսական և թուրքական հրամանատարությունների միջև:
85. Ո՞վ էր հայ կամավորների ջոկատներից ամենամեծի հրամանատարը:
86. Ո՞վ էր հայ կամավորական երկրորդ ջոկատի հրամանատարը:
87. Կամավորական ո՞ր ջոկատի հրամանատարն էր Համագասպ Սրվանձյանցը:
88. Ո՞վ էր հայ կամավորական չորրորդ ջոկատի հրամանատարը:
89. Կամավորական ո՞ր ջոկատի հրամանատարներից էր Հայկ Բժշկյանը (հետագայում՝ հայտնի խորհրդային զորահրամանատար Գայր):
90. Ի՞նչ անվանում ստացավ 1915 թ. ապրիլին Ազգային բյուրոյի որոշմամբ 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ջոկատների միավորմամբ ստեղծված զորագունդը:
91. Ո՞վ էր «Արարատյան» զորագնդի հրամանատարը:
92. Կամավորական ո՞ր ջոկատի հրամանատարն էր Հովսեփ Արղությանը:
93. Ե՞րբ է սկսվել Վանի 1915 թ. ինքնապաշտպանությունը:
94. Ո՞վ էր Վանի Այգեստան թաղամասի Չինվորական մարմնի ղեկավարը:
95. Ո՞վ էր Վանի Քաղաքամեջ թաղամասի Չինվորական մարմնի ղեկավարը:
96. Ինչպիսի՞ն է Վասպուրականում ինքնապաշտպանական մարտերի արդյունքը:
97. Ինչպիսի՞ն է Սասունում ինքնապաշտպանական մարտերի արդյունքը:
98. Ո՞վ էր Մուշի 1915 թ. ինքնապաշտպանության ղեկավարը:
99. Ո՞վ էր Շապին Գարահիսարի ինքնապաշտպանության ղեկավարը:
100. Ո՞վ էր Ուրֆայի (Եդեսիայի) 1915 թ. ինքնապաշտպանության ղեկավարը:
101. Ո՞վ էր Երևանյան զորախմբի հրամանատարը 1918 թ. մայիսին:
102. Ե՞րբ տեղի ունեցավ Սարդարապատի ճակատամարտը:
103. Ո՞վ էր հայոց զորքի հրամանատարը Սարդարապատի ճակատամարտում:
104. Ո՞վ էր հայոց զորքի հրամանատարը Բաշ-Մպարանի ճակատամարտում:
105. Ե՞րբ հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը:
106. Ո՞վ էր Հայաստանի Հանրապետության (1918-1920 թթ.) առաջին վարչապետը:
107. Ե՞րբ է տեղի ունեցել Անկախ և միացյալ Հայաստանի հռչակումը:
108. Ե՞րբ է կնքվել Սևրի պայմանագիրը:

109. Ե՞րբ է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը ստորագրել իրավարար վճիռը, որով որոշվում էր Թուրքիայի և Հայաստանի սահմանագիծը:
110. Ո՞վ էր ղեկավարում Սյունիքի ինքնապաշտպանությունը 1919 թ. հոկտեմբերից մինչև 1921 թ. ամառը:
111. Ե՞րբ է խորհրդայնացվել Հայաստանի Հանրապետությունը:
112. Ո՞ր տարածքն է անջատվել Հայաստանիվ 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով:
113. Ո՞ր կոնֆերանսի ժամանակ «թաղվեց» Հայկական հարցը:
114. Ե՞րբ է Լեռնային Ղարաբաղն անջատվել Խորհրդային Հայաստանից և կցվել Խորհրդային Ադրբեջանին:
115. Ո՞ր թվին է կատարել իր հայտնի վրիժառու գործողությունը Գուրգեն Յանիկյանը:
116. Ե՞րբ է հռչակվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:
117. Ե՞րբ է ազատագրվել Ծուշին:
118. Ո՞ր տարածքն է այժմ կապում Հայաստանը Արցախի տարածքի հետ:
119. Արցախյան հերոսամարտի սփյուռքահայ ի՞նչ հերոսներ գիտեք:
120. Ովքե՞ր են Հայ ազգային հերոսներ են: Ինչի՞ համար են նրանք ստացել այս կոչումը:

**ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԱԾԱՐ
(գրավոր փուլի համար)**

Կինո, թատրոն

121. Ո՞րն է հայկական մուլտիպլիկացիոն առաջին կինոնկարը:
122. Ինչպե՞ս է կոչվում Հայաստանում անցկացվող կինոնկարների միջազգային փառատոնը:
123. Ինչպե՞ս է կոչվում հայկական առաջին հնչունային կինոնկարը:
124. Ու՞մ անունով է կոչվում «Հայֆիլմ»-ը:
125. Ո՞վ է «Նռան գուլնը» ֆիլմի կինոբեմադրիչը և ու՞մ է նվիրված այն:
126. Ո՞ր բնագավառի ներկայացուցիչներ են Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը, Ավետ Ավետիսյանը:

Կրոն

127. Ո՞ր լեռան վրա է գտնվում Կոմնագենեի հայոց թագավորության գլխավոր սրբավայրը:
128. Ո՞րտեղ է պահվում Անահիտ աստվածուհու բրոնզաձուլյ արձանի գլուխը:
129. Ո՞վ էր հայոց դիցարանում գրի ու գրականության հովանավոր աստվածը:
130. Ո՞ր աստվածներն են գլխավորել Հայոց դիցարանը: Ի՞նչ դեր և գործառույթներ են նրանք կատարել:

Գրականություն, գիտություն

131. Ո՞վ է «Վարք Մաշտոցի» երկի հեղինակը:
132. Ի՞նչ երկով է հայտնի Եզնիկ Կողբացին:
133. Ո՞վ է ստեղծել հայոց առաջին դատաստանագիրքը:
134. Ո՞ր թվականին է հիմնադրվել Երևանի համալսարանը:
135. Ե՞րբ է ստեղծվել ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան:
136. Գիտության ո՞ր բնագավառի ներկայացուցիչ էր Վիկտոր Համբարձումյանը:
137. Ո՞վ էր ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի առաջին նախագահը:
138. Ո՞ր գիտնական-փիլիսոփան է հիմնել Գլաձորի համալսարանը:
139. Ու՞մ անունն է կրում Երևանի պետական բժշկական համալսարանը:
140. Հայ գիտնական, որը հիմնադրել է ստորջրյա հնագիտությունը:
141. Հայերեն առաջին գիրքը ե՞րբ և որտե՞ղ է տպագրվել:
142. Հայաստանում ե՞րբ և որտե՞ղ է հիմնվել առաջին տպարանը:
143. Որտե՞ղ է գտնվում Մխիթարյանների միաբանությունը և ո՞վ է եղել նրա հիմնադիրը:
144. Ո՞վ «Մատյան ողբերգության» պոեմի հեղինակը:
145. Գրական ո՞ր ժանրի հեղինակը դարձավ Ներսես Ծնորհային:

146. Ո՞վ է Մուսա լեռան ինքնապաշտպանության մասին պատմող նշանավոր վեպի հեղինակը:
147. Ո՞վ է մեծարվել «Ամենայն հայոց բանաստեղծ» տիտղոսով:
148. Ո՞ր երկրում էր ապրել և ստեղծագործել Վիլյամ Սարոյանը:

Արվեստ

149. Ո՞վ է նկարագարել Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» անմահ պոեմը, և պատկերել հանճարեղ հեղինակին:
150. Հայոց մանրանկարչության ամենամեծադիր նմուշը:
151. Մատենադարանում տեղակայված «Մասունցի Դավիթ» պաննոյի հեղինակը:
152. Ո՞վ է «Անուշ» օպերայի հեղինակը և ո՞ր պոեմի հիման վրա է այն ստեղծվել:
153. Ո՞ր հայ նկարիչներն են հայկական գինանշանի հեղինակները:
154. Ո՞վ է մշակել «Կոունկ» երգը:
155. Խաչքարերի ո՞ր տեսակն են անվանում «Ամենափրկիչ»:
156. Էջմիածնի Մայր տաճարի որմնանկարների հեղինակները:
157. Ո՞վ է «Մալումե» շքեղաշուք կտավի հեղինակը:
158. Ո՞վ է հանրահայտ «Սպարտակ» բալետի հեղինակը:
159. Ո՞ր տաճարն է գտնվում Վանա լճի Կտուց կղզում:
160. Ո՞ր հայ նկարչին է պատկանում Եղիշե Չարենցի ամենահայտնի դիմանկարը:
161. Ո՞ր դարում է ստեղծվել Պազիրիկ աշխարհահռչակ գորգը:
162. Ո՞ւմ մեկենասությամբ են կառուցվել Հաղպատն ու Սանահինը:
163. Ո՞վ էր Կիլիկյան Հայաստանի ամենահայտնի մանրանկարիչը:
164. Էջմիածնի Մայր տաճարի առաջին գմբեթավոր եկեղեցին ո՞վ և ե՞րբ է կառուցել:
165. Հայ ո՞ր ճարտարապետն է վերականգնել Կոնստանդնուպոլսի Ս.Սոֆիա տաճարի գմբեթը, որը 1000 տարի անց կանգուն է մինչև օրս:
166. Անիի ո՞ր տաճարում է գտնվում Գագիկ Բագրատունի թագավորի արձանը՝ տաճարի մանրակերտը ձեռքին:
167. Ո՞վ է միջնադարյան Հայաստանի այն նշանավոր ստեղծագործողը, որը միաժամանակ և՛ ճարտարապետ էր, և՛ նկարիչ, և՛ քանդակագործ:
168. Ո՞ր վանքում է գտնվում «Մագիստրոսի ճեմարան» լսարանը:
169. Որտե՞ղ է գտնվում նշանավոր կրոնական և գիտակրթական կենտրոն Կեչառիսի վանքը:
170. Ո՞րն է իսաչքարային արվեստի նշանավոր բացօթյա թանգարան-գերեզմանոցը՝ 2005 թվականին բարբարոսաբար ոչնչացված ադրբեջանցիների կողմից:
171. Ալեքսանդր Թամանյանի ո՞ր ստեղծագործությունն է 1937թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում մեծ ոսկե մեդալ «Գրանտ Պրի» ստացել:
172. Ո՞վ է Երևանի Մատենադարանի, ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ Նախագահի նստավայրի շենքերի հեղինակը:
173. «Սանահինի վանքի գավիթը» հանրահայտ ստեղծագործության հեղինակը:

174. Երօր է բացվել Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի գոհերի հուշարձանը:
175. Ո՞վ է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և Բյուրականի աստղադիտարանի շենքերի հեղինակը:
176. Ո՞վքեր են Երևանի «Մայր Հայաստան» հուշարձանի հեղինակները:
177. Ու՞մ նախագծով է կառուցվել Սարդարապատի հուշահամալիրը:
178. Ո՞րն է աշխարհահռչակ նկարիչ Արշիլ Գորկիի ծննդավայրը:
179. Ո՞վ է «Վարդան Մամիկոնյան» հուշարձանի հեղինակը:
180. Ո՞ր թվականին է հիմնադրվել Հայաստանի Ազգային Պատկերասրահը:
181. 20-րդ դարի հայ նկարիչ Ջիոտտոյի իրական անունը:
182. Հայ մեծ նկարիչ, ով թարգմանել է Շեքսպիրի անմահ ստեղծագործությունները:
183. Բագրատունիների խորհրդանիշը (բազմիցս հանդիպում ենք հայ արվեստում):
184. Ինչպե՞ս են անվանում հայկական մանրանկարչության մեջ հաճախ հանդիպող, մարդկային դեմքով թռչուններին:
185. Ո՞վ է նկարել «Նոյը իջնում է Արարատից » ստեղծագործությունը:
186. Հայ ո՞ր թագավորին է պատկերել Թորոս Ռոսլինը:
187. Իտալական Վերածննդի մեծագույն վարպետ, որը Որդան Կարմիր և Հայկական Կավ է օգտագործել իր ստեղծագործություններում:
188. Հայկական տպագիր Աստվածաշնչի համար (1666-1668-թ) ո՞ր մեծանուն գերմանացի նկարիչն է կատարել նկարագարումներ:
189. Ֆրանսահայ քանդակագործ, «Մայրմե» քանդակի հեղինակը:
190. Ո՞վ է ՀԽՍՀ գերբի հեղինակ գեղանկարիչը:
191. Հայ արևելագետ, որը 1934-1951թթ. եղել է Էրմիտաժի տնօրենը:
192. Ե՞րբ է ստեղծվել Հայաստանի պատմության թանգարանը:
193. Հայ ո՞ր նկարչին են պատկանում «Ալմաստ» օպերայի բեմանկարները:

Երաժշտության պատմություն

194. Ի՞նչ է հոռովելը: Ովքե՞ր և ի՞նչ նպատակով են երգել այն:
195. Ի՞նչ ժանրի երգ է «Կռունկը»: Նշել նույն ժանրի մեկ այլ երգ:
196. Ի՞նչ է աշուղական երաժշտությունը: Ի՞նչ գործիք են նվագել աշուղները: Նշել մի քանի աշուղների անուններ:
197. Գրիգոր Նարեկացին զարգացման կատարելության է հասցրել հայ միջնադարյան երգի մի կարևոր տեսակ, որը կոչվում է...
198. Ի՞նչ է Պատարագը: Ի՞նչ երաժշտական ժանրեր կան Պատարագի մեջ:
199. Ո՞ր ոլորտներում է գործել Կոմիտաս Վարդապետը:
200. Ո՞վ է «Անուշ» օպերայի հեղինակը: Ո՞ր գրական ստեղծագործության վրա է օպերան հիմնվում: Նշել մեկ այլ կոմպոզիտոր, որը նույնպես նպատակ է ունեցել ստեղծելու «Անուշ» օպերա:

**ՀԱՐՑԱԾԱՐ
(բանավոր փուլի համար)**

1. Նշել հայ կոմպոզիտորներ (3 անուն), ովքեր հեղինակ են սիմֆոնիաների:
2. Նշել հայ կոմպոզիտորներ (3 անուն), ովքեր հեղինակ են օպերայի:
3. Նշել հայ կոմպոզիտորների հեղինակած բալետներ (3 անուն):
4. Ո՞ր կոմպոզիտորն է Սերգեյ Պրոկոֆևի և Դմիտրի Շոստակովիչի հետ միասին համարվել Խորհրդային ժամանակաշրջանի երաժշտության առանցքներից մեկը: Նշել նրա ստեղծագործություններից մի քանիսը:
5. Ո՞վ է Դավիթ Անհաղթը: Ի՞նչ գիտեք նրա մասին:
6. Ո՞վ է Անանիա Շիրակացին Ինչո՞վ է նա հայտնի:
7. Ի՞նչ գիտեք Արտեմ և Աբրահամ Ալիխանյանների մասին:
8. Ի՞նչ առնչություն ունի Մեսրոպ Մաշտոցը հայ երաժշտության հետ:
9. Ի՞նչ նշան է պատկերված Անի քաղաքի պահպանված դարպասների վրա, և ի՞նչ է այն խորհրդանշում:
10. Թվարկել միջնադարյան Հայաստանի խոշորագույն ճարտարապետ Տրդատի կառուցած տաճարները:
11. Թորոս Ռոսլինի վրձնած քա՞նի նկարագարդ ձեռագիր է պահպանվել:
12. Ի՞նչ է «Տարածական նկարչությունը», և հայ ո՞ր հանճարեղ նկարչին են համարում այս երևույթի հիմնադիրը:
13. Հայկական խոշորագույն վանքերում «աշխարհիկ բնույթի» ի՞նչ շենքեր են կառուցվել:
14. Որո՞նք են Կիլիկյան հայկական թագավորության նշանավոր ամրոցները:
15. Մեծանուն հայերից ու՞մ կարող ենք տեսնել Գրիգոր Խանջյանի «Վարդանանք» մեծադիր ստեղծագործության մեջ:
16. «Մասնա Ծոեր» Էպոսի ինչպիսի՞ նկարագարողներ գիտեք:
17. Հայկական գորգերի քանի տեսակ կարո՞ղ եք նշել:
18. Ի՞նչ գիտեք Արդինի-Մուսասիրի տաճարի մասին:
19. Ո՞րն է Վանի թագավորության ամենամեծ սեպագիր արձանագրությունը և ո՞ր արքայի ժամանակաշրջանի պատմությանն է նվիրված:
20. Ո՞վ է գրել Տիգրան Մեծի պատմությունը: Ինչ գիտեք այդ գործի ճակատագրի մասին:
21. Ըստ ավանդության՝ ո՞ր իրադարձությունից սկսած են մեր նախնիները հաշվել Հայոց Բուն տոմարը:
22. Նկարագրեք Գառնիի տաճարը:
23. Ո՞ր աստվածների արձաններն են կանգնեցված Նեմրոթի սրբավայրում: Ի՞նչ գիտեք այդ սրբավայրի մասին:
24. Ո՞ր իրադարձությունների մասին է պատմում Ագաթանգեղոսը:
25. Ի՞նչ գիտեք Մովսես Խորենացու մասին:
26. Ո՞վ է «Վարք Մաշտոցի» երկի հեղինակը, ի՞նչ գիտեք նրա մասին:

27. Ի՞նչ գիտեք Երուսաղեմի հայկական եկեղեցիների խճանկարների մասին:
28. Ի՞նչ գիտեք վարդապետարանների մասին:
29. Ե՞րբ և ու՞մ կողմից է հիմնվել Գլաձորի համալսարանը: Ովքե՞ր էին ֆինանսավորում համալսարանի գործունեությունը:
30. 9-13-րդ դարերում ովքե՞ր են գրել «տիեզերական» պատմություններ:
31. Ի՞նչ գիտեք Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» մասին:
32. Ի՞նչ գիտեք Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» մասին:
33. Ովքե՞ր էին 9-14-րդ դարերում ապրած երկու նշանավոր առակագիրները:
34. Ի՞նչ գիտեք Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու մասին:
35. Ո՞ր խաչքարերն էին կոչվում «Ամենափրկիչ»:
36. Ներկայացրեք Միքայել Չամչանցի գլուխգործոցը:
37. Ե՞րբ է լույս տեսել «Նոր բառգիրք հայկազյան լեզվի» կոթողային աշխատությունը, ի՞նչ գիտեք դրա մասին:
38. Նշեք աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու հայկական թեմաներով նկարներից առնվազն երեքը: